



Պոմիդորի վաղահաս սորտերի մշակության տեխնոլոգիա նախալեռնային գոտու պայմաններում

/ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ/

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պոմիդորը մեր հանրապետությունում համարվում է բուսաբուծության առաջատար մշակաբույսերից մեկը: Այդ է վկայում նրա թարմ և պահածոյացված տեսականու լայն օգտագործումը մարդու սննդի մեջ: Պոմիդորը, հիմնականում, մշակվում է Արարատյան դաշտավայրում: Դրա տեղափոխումը լեռնային և նախալեռնային շրջաններ կապված է վառելանյութի հսկայական ծախսումների հետ, որի պատճառով նշված շրջանների ազգաբնակչությանը այն վաճառվում է բարձր գներով:

Հաշվի առնելով այդ մշակաբույսի ժողովրդատնտեսական կաևոր նշանակությունը, Շիրակի մարզի նախալեռնային գոտու ջրովի վարելահողում կազմակերպվել է պոմիդորի վաղահաս և միջավաղահաս սորտերի մշակություն, դրանցից ընտրվել են տվյալ մարզի հողակլիմայական պայմաններին համարված լավագույնները:

ՄԱՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Պոմիդոր մշակաբույսից բարձր բերք ստանալու համար կարևոր նշանակություն ունեն հողի պարարտացումը, դրա բերրիության պահպանումը, ինչպես նաև՝ ցանքաշրջանառության կիրառումը:

Պոմիդորի Գ-յումրի, Լարվառ, Անահիտ և Սյունիք սորտերի մշակության տեխնոլոգիայի ներդրումը իրականացվել է Շիրակի մարզի Ախուրյան գյուղի մենատնտես Գնել Սարգսյանի տնամերձ հողամասում: Հողամասի նախորդը եղել է հացահատիկ:

Սորտերի նկարագրությունը

Գ-յումրի - վաղահաս է, վեգետացիայի տևողությունը 95-98 օր է, բույսի թուփը հավաք, պտուղները կլորավուն են՝ 80-120 գրամ զանգվածով, ամուր, փոխադրունակ: Բերքատվությունը 680-700 g/հա:



Անահիտ – միջավաղահաս է, վեգետացիան 102-105 օր, թուփը ցածրան, պտուղները կլոր տափակավուն, 125-150 գրամ զանգվածով, փոխադրունակ, բերքատվությունը 800-820 g/հա:



Սյունիք – միջավաղահաս է, վեգետացիան 100-103 օր, թուփը միջակ աճեցողությամբ, պտուղները կլոր՝ 130-180 գրամ զանգվածով, փոխադրունակ: Բերքատվությունը 860-880 g/հա Արարատյան դաշտում :

Լարվառ – վաղահաս սորտ է, վեգետացիան՝ 97-102օր, թուփը միջակ աճեցողությամբ, պտուղները կլոր տափակավուն են, 120-180 գրամ զանգվածով, ամուր, փոխադրունակ: Բերքատվությունը՝ 760-780g/հա: /Արարատյան դաշտում/:

Հողի նախապատրաստում

Նախապատրաստման աշխատանքները պետք է սկսել աշնանից՝ կատարել խորը վար, հող մտցնելով գոմաղը (0.2հա-ին 8 տոննա, երկրորդ տարում պահպանված):

Սերմերի ախտահանում

Պոմիդորի մշակության տեխնոլոգիայում կարևոր նշանակություն ունի սերմերի նախացանքային մշակումը բակտերիալ, սնկային, վիրուսային հիվանդությունների կանխարգելման համար: Ցանքից 5-6 օր առաջ սերմերը ենթարկել են ջերմային ախտահանման (56°C-ի ջերմության տակ, ջրային բաղնիքում, թանգիֆի պարկերի մեջ, 30 րոպե տևողությամբ):

Այնուհետև սերմերը չորացնելուց հետո ախտահանել նատրիումի հիպոքլորիդի մեկ տոկոսանոց լուծույթով, (Չ, Մանուկյանի և Լ. Միմոնյանի առաջարկված մեթոդով):

Հողախառնուրդի պատրաստում

Ցանքից առաջ պատրաստել հողախառնուրդ (2մաս բուսահող+2մաս ճմահող + 3մաս տորֆ) և լցնել ջերմոց, հավասարաչափ հարթեցնել 10-15 սմ շերտով, ապա այն դաջել մատավոր դաջով 25սմ² սնման մակերեսով, 1.5-2սմ խորությամբ:

Ցանք

Տեխնոլոգիայով մշակվող պոմիդորի սորտերի սերմերի ցանքը ջերմոցում կատարել /նախալեռնային գոտու համար/ ապրիլ ամսին: Ցանքից հետո ջերմոցը ջրել մինչև լիարժեք հագեցնալը և այն ծածկել մինչև սերմերի ծլելը, որից հետո բացել և կատարել քաղիան-նոսրացում: Հետագայում տանել սածիլների ջրման, քաղիանի, սնուցման (տրվել է ամռնյակային սիլիտրա 1մ²-ում 25-30գրամ, ապա լավ ջրվել ցնցուղով) և պայքարի նախագուշական միջոցառումները (3 տերև հասակում սրկվել է ռիդոմիլ-գոլդ ՄՁ-ի 0.25%-ոց լուծույթ): Սածիլումից մեկ շաբաթ առաջ, աշնանից, նախապատ-րաստված դաշտը վարել չիզել-կուլտիվատորով հարթեցնել և տեղագծվել:

Պայքարի կազմակերպում

Վնասատուների դեմ որպես պայքարի միջոցառում սածիլումից հետո տալ բազուդին-600, համակցված կերով պատրաստված գրավչանյութով, 1:20 հարաբերությամբ, 30կգ/հա ծախսման չափաբաժնով:

Վեգետացիայի ընթացքում, ելնելով բույսերի նորմալ աճման ու զարգացման պահանջներից, իրականացնել հետևյալ ագրոմիջոցառումները՝ ջրում (10 անգամ), քաղիան, բուկլից, սնուցում (2 անգամ), պայքար հիվանդությունների, վնասատուների դեմ (2 անգամ):

Քերահավաք

Հատուկ ուշադրություն է դարձնել փորձարկվող սորտերի ապրանքային բերքին, պտուղների ամրությանը, հիվանդությունների նկատմամբ դիմացկունությանը:

Փորձարկման արդյունքները

Շիրակի մարզում պոմիդորի հետազոտվող սորտերի ֆենոլոգիական դիտումներից (ծլում, ծաղկում, պտղակալում, հասունացում) պարզվեց, որ Գ-յումրի և Անահիտ սորտերը գենետիկորեն, համեմատաբար պահպանել են իրենց վաղահասությունը՝ վեգետացիան տևել է 106-108 օր, ի համեմատ Լարվառ և

Սյունիք սորտերի՝ 112-115 օր, որոնց հասուն բերքը առաջին 2-ի նկատմամբ եղել է 15-20%-ով ցածր:

Հետազոտվող սորտերի ամենակարևոր տեսական ցուցանիշը դրանց ապրանքային բերքն է, որի հաշվարկը սկսվել է պտուղների զանգվածային հասունցման ժամանակ, այնուհետև պարբերաբար 5 օրը մեկ կատարվել հավաք: Ստացված բերքը ըստ սորտերի եղել է՝ Գ-յումրի-750 գ/հա, Անահիտ 351- 780 գ/հա. Լարվառ-700 գ/հա, Սյունիք-690գ/հա:

Տեխնոլոգիայի կիրառման վայրը

Շիրակի մարզի բնակչությանը թարմ բանջարեղենով ապահովելու համար առաջարկվում է մշակել պոմիդորի Գ-յումրի և Անահիտ սորտերը:

Օգտագործված գրականություն

1. Զուրաբյան Վ. «Պոմիդորի նոր արդյունավետ սորտեր
Զուրաբյան Վ., Սկոյան Ռ., Մանուկյան Զ, Սիմոնյան Լ., Դազարյան Ա. «Հողերի բերրիության պահպանման բարձրացման և արդյունավետ օգտագործման խնդիրները արդի պայման-ներում»:
Գիտաժողովի նյութերի ժողովածու Ե.2003, էջ 61
2. Մարտիրոսյան Գ.Մ. «Լոլիկի տարբեր սորտերի պտուղների որակը կախված սածիլի մշակման տեխնոլոգիայից»:
3. Տեղեկատվական թերթիկ
Ինտեգրացված պայքարը լոլիկի վնասատուների և հիվանդությունների դեմ ծրագրի վերաբերյալ:

Կիրառական հետազոտությունների և ագրոքիզմեսի հիմնադրամ: հետազոտողների խումբ:

* * *

Տեղեկությունների համար դիմել.

- **Բանջարաբուստանային մշակաբույսերի գիտական կենտրոն,**
Խորհրդատու՝ Վազգեն Զուրաբյանին,
հեռ. /0236/4 08 92 /ծ/; 636378 /բն/
- **ԳԱՀԿ, Ինովացիայի և ուսուցման բաժին**
- Շիրակի ԳԱՄԿ, հեռ. /0312/ 4-18-14

Տպագրվել է Գյուղական Ձեռնարկությունների և Փոքրածավալ Առևտրային Գյուղատնտեսության Զարգացման Ծրագրի շրջանակներում: ԳԱՀԿ տպարանում, պատվերի թիվ 29, տպարանակ 990: